Հավելված 1

Շիրակի պետական համալսարանը 2019-2020 ուստարում ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հաշվառմամբ, իր միջոցների հաշվին ուսման վարձի մասնակի փոխհատուցում /զեղչ/ է տրամադրում հետևյալ սոցիալական խմբերին*.

Առկա/ Հեռակա ուսուցում /բակալավր և մագիստրատուրա/

3.6.2 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին՝ մինչև 23 տարին լրանալը *- 50% զեղչ*

3.6.3 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ /միածնող/ ուսանողներին *- 50% զեղչ*,

3.6.4 մինչև 1 տարեկան երեխա ունեցող ուսանողներին *- 50% զեղչ*,

ՄՈԳԻ ՇԵՄ ԲԱԿԱԼԱՎՐ	ՄՈԳ ՇԵՄ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ	ԶԵՂՉԻ ՉԱՓ
76	86	*50%*

3.6.5 3 և ավելի անչափահաս երեխա կամ 3 և ավելի ուսանող ունեցող ընտանիքների ուսանողներին*- 30% զեղչ*,

ՄՈԳԻ ՇԵՄ ԲԱԿԱԼԱՎՐ	ՄՈԳ ՇԵՄ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ	ԶԵՂՉԻ ՉԱՓ
76	86	*30%*

3.6.6 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին -*30% զեղչ*

ՄՈԳԻ ՇԵՄ ԲԱԿԱԼԱՎՐ	ՄՈԳ ՇԵՄ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ	ԶԵՂՉԻ ՉԱՓ
76	86	*30%*

3.6.7 Մարտական հերթապահություն իրականացնող զորամասում մարտական հերթապահության կամ գործողության մեջ ընդգրկված պարտադիր զինվորական ծառայություն անցած ուսանողներին, ինչպես նաև պայմանագրային զինծառայության ընթացքում ապրիլյան հերթապահություն իրականացրած կամ ապրիլյան գործողություններին մասնակից ուսանողներին

- մարտական հերթապահություն՝ 30% զեղչ, ապրիլյան պատերազմում մարտական հերթապահություն՝ 50% զեղչ, մարտական գործողություն՝ 70% զեղչ,

3.6.8 Սոցիալապես անապահով և ընտանիքի անապահովության գնահատման համակարգում հաշվառված /ընտանիքի անապահովության սահմանային միավորից ցածր միավոր /0-29.99/ ունեցող ընտանիքների/ ուսանողներին *- 20% զեղչ*,

3.6.9 Հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա-ուսանողներին *- 30% զեղչ*

3.6.10 Մարզական և ստեղծագործական ակնառու հաջողություն ունեցող ուսանողներին. *- 30% զեղչ*.

- **Աշխարհի, Եվրոպայի և Հայաստանի չեմպիոն ուսանողներ, Օլիմպիական խաղերի մրցանակակիրներ,**
- **արտասահմանյան կամ հանրապետական մենահամերգ կամ ցուցահանդես ունեցած ուսանողներ,**
- **միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական օլիմպիադաների մրցանակակիրներ,**
- **միջազգային կամ հանրապետական ՈՒԳԸ գիտաժողովի մրցանակակիրներ:**

3.6.11Փոխատեղման /ռոտացիա/ մրցույթի արդյունքում 0.1 միավոր տարբերությամբ վճարովի համակարգ տեղափոխված ուսանողներին *- 50% զեղչ*:

3.6.12 Համալսարանի ռեկտորի, մանդատային հանձնաժողովի առաջարկությամբ և որոշմամբ ուսման վարձ մասնակի փոխհատուցում է տրամադրվում առանձնահատուկ դեպքերում՝ այլ կարգավիճակ ունեցող բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրով սովորող ուսանողներին:

Ուսման վարձի մասնակի փոխհատուցման հայտարարությունից հետո ուսանողի կամ նրա լիազոր անձի կողմից ներկայացված ժամկետանց դիմումները կքննարկվեն մանդատային հանձնաժողովի կոմից՝ դիմումի ժամկետանցությունը հիմնավորող փաստաթղթերի առկայություն դեպքում:

Մի քանի արտոնությունների հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:

*** *3.6.2, 3.6.3, 3.6.7, 3.6.8, 3.6.9, 3.6.10, 3.6.12 կետերի զեղչն իրականացնելու համար ՄՈԳ-ի նվազագույն շեմը սահմանել 40 միավորը:***